





Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ քաղաքին դէմ:



ՀԱՆԳԻՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هانراكيداق
مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 21

20 ՄԱՅԻՍ 1902

Բուրասանի եռանդուն աշխատակից Աղեմանդր ԷՖ. Փանոսեան՝ երբ կը հրատարակէր Շողեր ու Յողեր, Պողոս ԷՖ. Պառնասեան իբր մեծարանք մը երիտասարդ Պուէթին տաղանդին՝ ինքնագիր ոտանաւոր մը դրկած էր մեզ Բուրասանի մէջ հրատարակուելու համար :

Փանոսեան ԷՖէնթի համեսութեան ոգին մեզ ծանօթ ըլլալով մեր հով պահեցինք զայն ու չհրատարակեցինք այն ատեն . բայց այսօր այդ տողերը՝ բանաստեղծի մը գովեստը ըլլալէ աւելի՝ մեծ գրողի մը բանկագին յիշատակներէն մին ըլլալուն կը հրատարակենք զայն Հանրագիտակի մէջ , վասն ըլլալով որ տան եւ եօթը տարուան համբերութենէ վերջը՝ Փանոսեան ԷՖ. մեզ կը ներէ այսօրուան մեր անգաղտնապահութիւնը , որ նպատակ ունի լոկ՝ սիրուած յիշատակ մը յարգելու :

Ա Ռ

Պ. ԱՂԵՔՍԵՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ

ԵՐԵՏԱՊԱՐԴ ՊՈԻՏ

Քոյ « Շող ու Յողեր »,
 Լինուեն հոգիներ .
 Ապրի՛ս Փանոսեան .
 Դու ունիս գրիչ ,
 Սահուն , ըզնայիչ ,
 Իբրեւ դիւքական :

Հայ լեզուն նովաւ .
 Մի փայլ ըստացաւ .
 Առոյգ եւ աշխոյժ ,
 Զի դու զարնային ,
 Նրման սիւզ ուժգին
 Շնչես քաղցր յոյժ :

Քոյ մուսայն քեպէս
 Իւր թռչմամբ , Պուէ՛s ,
 Դեռ նոր սաւառնի .
 Այլ իւր թռիչներ ,
 Սրլանին ի վեր ,
 Խոյանան յիւրկնի :

Մերք մարգաց վերայ,
Սահի եւ խայսայ
Ի գեղ բընութեան .
Կամ անմեղ մանկանց
Շընորհե մի գանձ
Բարի կրթութեան :

Եւ մերք առակաց
Լինի բանասաց
Իբրեւ Լաճօնքեն .
Իւր կենդանիներ ,
Ձերդ իմաստուններ
Ըզմարդ խրատեն :

Մերք հայացընես
Նրբ դու քարզանես
Օսար հեղինակ .
Պարոն Լաբալիս
Ձորմէ կը խօսիս
Տայ մեզ օրինակ :

Այնչափ դու յաջող
Նդեր մի փերթող
Հաննարիւ ճրկուն ,
Ձի ոսանաւոր
Իբրեւ խաղ ինչ նոր
Դարձուցիր սիրուն :

Դու նովաւ սափոր
Կազմես ոսկեփոր ,
Աչաց սխալի ,
Կամ ձիւնոյ գնակ
Շինես սպիտակ
Մանկանց հանելի :


Թե՛ ի հայկական
Եւ քե՛ ֆրանսական
Գրես լեզուներ ,
Այնպէս որ բնասուր
Կարծի փեզ տրիսուր
Խօսիլ փերուածներ :

Քոյ ըզգացումներ
Կրեն եւ ըզտեր
Բարւոյն , վայելչին .
Ուսի ընծայեն
Հրահանգ համօրեն
Միջոց ընթերցողին :

Տողե՛ եւ երգե՛ ,
Զմուսայս մրշակե
Պրէկ՝s պատանի ,
Դու մեծ ասպարէզ
Ունիս վասըն փեզ
Քնարիւդ գեղանի :

ՊՕՂՈՍ ՊԱՌՆԱՍԵԱՆ

Կ. Պոլիս, 12 Յուլիս 1885



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆԻԹԻԻՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

« Հաստատել խորհելու , զգալու
գործելու սովորութիւններ . ահա
անոր մէջն է ամբողջ դաստիարա-
կութիւնը » :

Ա. — ԿԵԱՆՔՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԷՋ

12. Յարգեցե՛ք ձեր ծնողքը

Օր մը փոքրիկ աղջիկ մը մօրմէն սաս-
տիկ յանդիմանութեան արժանացեր էր :
Բայց որովհետեւ նա բարի էր և սրտին խո-
րէն կը սիրէր իր մայրը , բնաւ չպատաս-
խանեց և արժանացած յանդիմանութիւնը
լռութեամբ ընդունեց : Օտարական մը , որ
հոն ներկայ էր , ուզելով տղին բնաւորու-
թիւնը փորձել , սպասեց որ մինակ մնայ ա-
նոր հետ և սկսաւ ամբաստանել մայրը , ը-
սելով , թէ շատ խիստ , անիրաւ և չարա-
սիրտ էր : Անմիջապէս փոքրիկ աղջիկը լացը
զաղբեցուց և ուղղակի իրեն հետ խօսող օ-
տարականին աչքերուն նայելով ըսաւ . « Կը
սխալիք , մայրս լաւ գիտէ ինչ որ կ'ընէ ,
արժանի է յանդիմանուելու : Ձեմ ուզե՛ր որ
մօրս համար գէշ խօսիմ իմ առջեւ » :

Ահա օրինակ մը այն յարգանքին , որ
պէտք է ունենալ դէպի ծնողքն : Անոնց հը-
րամանին վրայ բնաւ մի վիճէք , հնազանդե-
ցէք անոնց կամքին , և մանաւանդ բնաւ մի
ծաղրէք և ոչ ուրիշներուն թոյլ տուէք , որ
անոնց ընթացքը ձեր առջեւ պախարակեն :
Եթէ կը սիրէք ձեր ծնողքը , գործը աւելի
կը դիւրանայ , որովհետեւ սերն առանց յար-
գանքի չլինիր :

13. Անճանաչելի

Ձեր ծնողներն այժմ երբեմնական եղածներուն նման չեն։ Առաջ տղայք եղակի չէին խօսէր հայրերու հետ, միշտ շատ խոնարհութեամբ կը խօսէին, անոնց հարցումներուն միայն կը պատասխանէին, բնաւ իրենք հարցումներ չէին ըներ, ընկերաբար չէին խօսակցէր և այն ընտանեկան քաղցր յարաբերութիւնը, որ դուք ունիք ձեր ծնողքին հետ, անոնք չունէին։

Սովորութիւնները փոխուած են։ Ձեր հայրերը ձեր մայրերը կ'ուզեն բարեկամ լինիլ և ատոր համար առաջուան խիստ սովորութիւնները մէկ կողմ կը թողուն։

Պէտք չէ անոնց այդ բարեկամ չարաչար գործածեմ, որ ձեզ հետ փոքրիկ կասկանք կ'ընեն, կը խաղան։ Ձեր հօր հետ ընկերով պէս մի' վարուիք և ոչ ալ ձեր մօր հետ դպրոցական ընկերակիցի մը պէս։ Մի' մոռնաք այն յարգանքները, որ կը պարտիք անոնց ամէն օր և ամէն տեղ, նոյն խիւրդ ձեզի հետ կը խաղան։ Երբեք մի' կարծէք թէ ձեզ ներքին է անոնց ըսել « ըսածդ ճշմարիտ չէ » կամ « սիրաս կը նեղացնես » կամ « զիս կը բարկացնես » ինչպէս կ'ըսուի երբեմն ընկերներու մէջ։ Այս կերպ վարմունքը գէշ դատարարական արդիւնք է։

Ձեր հայրերը ձեր մայրերը իրաւունք ունին մինչեւ ձեզ խոնարհիլ, բայց դուք իրաւունք չունիք մինչեւ անոնց բարձրանալ և համարել թէ հաւասար էք։

14. Ձեր ծնողքին համար մի' կսրմիք

Այժմ ընկերական կազմակերպութիւնը այնպէս եղած է որ, ամէն մարդ կրնայ բարձր դիրքի մը հասնիլ իր ախտաբանական և մտաւոր կարողութեան շնորհիւ։ Այսպէս երբեմն կը գտնուին այդ մարդիկ, կիներ, որոնք նշանաւոր դիրքեր կը գրաւեն, մինչդեռ իրենց ծնողները մնացած են շատ խոնարհ վիճակի մէջ։

Ի՞նչ պիտի մտածէիք երիտասարդ աղջկան մը կամ կնոջ մը վրայ, զոր պարագաներն այնպիսի դիրքի մը հասուցած ըլլալին, որ ասով յետոյ իր մօր հետ վարուէր իրեն ատորինի մը հետ, որ զայն չճանչնալ

ձեռացներ և կամ զայն այլ ևս չընդունէր ամէն մարդու առջեւ։ Մարդ միայն զգուանք և արհամահանք պիտի զգար անոր նկարագրին նկատմամբ։

Ընդհակառակն զգացումներու իրական մեծութիւնը, ճշմարիտ ազնուութիւնը յայտնի կը լինի այն երախտագիտութեամբ ու յարգով, զոր մենք պարտինք անոնց, որոնք իրենց ունեցած կրթութենէն աւելի բարձր կրթութիւն տուելու են մեզ։ Եթէ մենք նշանաւոր և ականաւոր մարդիկ կը դառնանք, այս բանը մեծ մասամբ կը պարտինք անոնց՝ մեր վրայ տածած խնամքներուն և մեզ համար ըրած ամէն տեսակ զոհողութիւններուն։ Իր ծնողքին համար կարմիրը կը նշանակէ ինքզինքը արհամարհելի դարձնել պատուաւոր անձերու աչքին։

15. Վստահեցե՛ք ձեր մօրը

Նորահաս փոքրիկ աղջիկներ, ձեր մօրը վստահեցէ՛ք ինչ որ ունիք ձեր մօրին եւ ձեր սրտին մէջ։ Ձեր մայրը քնքուշ բարեկամ մը՝ և ամենալաւ խորհրդատուն է։ Յայտնեցէ՛ք իրեն ինչ որ կը խորհիք, ինչ որ կը փափաքիք, ինչ որ ձեզ կը վշտացնէ։ Կամ մտաւորական խիղճը կը պատճառէ։ Նա միշտ ձեզ կը հասկնայ, որովհետեւ ինքն ալ ձեզ նման երիտասարդ եղած է։ Նա շատ լաւ կ'զգայ թէ իր աղջկին իրեն կը նմանի և պէտք է անոր համար սէր, գոյություն և ներողամտութիւն ունենայ ի՛նչպէս ոչ իր ծնողքն ալ այս ամէնն տեսեցած են իրեն համար։

Սիրեցե՛ք խօսակցիլ ձեր մօր հետ, կամ անոնին գործերով զբաղած ժամանակ կամ իր հոկոյութեան տակ անեղնադորժութիւն ըրած տոհմ։

Երբ ո՛ր և է խնդիր մը ձեզ զբաղեցնէ, երբ նոր խորհուրդ մը ունենաք ձեր մօրին մէջ, շատով ձեր մօրը խորհուրդին դիմեցէ՛ք։ Անոր՝ ձեր վրայ ունեցած սէրը միշտ պիտի ներշնչէ իրեն բաւ մը, խօսք մը, բացատրութիւն մը դառնել, որ ձեզի հաճոյք պատճառէ և ձեր սիրտն ու միտքը հանդարտացնէ։ Մայր եւ բարեկամ, այս երկու բառերը պէտք է միշտ միացնել։

16. Օգնութիւն

Յուսամ հետեւեալ մանրավէպը գիտէք, Բայց թոյլ տուէք անգամ մ'ալ ձեզ յիշեցընել:

Ապերախ որդի մը բրտութեամբ կը վարուէր իր ծերունի հիւանդոտ և անգործ հօրը հետ, մինչեւ իսկ միեւնոյն սեղանի վրայ հաց չէր ուտեր հետը. փայտէ հասարակ ամանի մը մէջ կերակուր կուտար, որ անկիւն մը նստած ուտէր: Օր մը այս մարդը տեսաւ, թէ իր որդին գանակով փայտէ բան մը կը շինէր: «Ի՞նչ կը շինես» հարցուց անոր: — Հայրիկ պատասխանեց տղան, պա-



պիս փայտէ ամանին պէս հատ մը կը շինեմ, որ երբ ծերանաս անով կերակուր տամ քեզ »:

Պատմութիւնը չյայտնեց թէ այս խօսքերը ապաշնորհ տղուն ընթացքը փոխեց, բայց կրնանք անկէ խրատ մը առնել:

Ապաշնորհ որդւոյն դէմ սաստիկ արհամարհանք կ'զգանք և միեւնոյն ժամանակ մեր խղճին, մեր գորովանքին և սիրոյն ձայնը, մեզ կ'ազդարարէ անոր չնմանիլ:

Հաստատ կերպով որոշենք մեր ծնողքին օգնել, եթէ այս կարեւոր է, երբ անոնք ծերանան, նոյն իսկ առանց սպասելու որ

մեզմէ օգնութիւն խնդրեն: Մեր ծնողքին կարօտքեան մեզ օգնելն աւելի քան քան չկայ:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱՁԱՐԱՊԵՏԵԱՆ



ԱՆԻԾՈՒԱԾ ՏՂԱՆ

Ա.

Բարիքի մէջ, Գեղարուեստից փողոցը հաստատուած տան մը գեղեցիկ սեղանատան պատէն կախուած ժամացոյցը՝ որ ոսկեղէրուազ սեւ փայտէ էր, իրիկուան ինը կը հնչէր, երբ սրահին դուռը բացաւ մանկամարդ կին մը:

— Ո՞ւր է Պ. Պրըվան, հարցուց սպասաւորին՝ որ դեռ նոր կ'աւարտէր սեղանի փռուցները յարգարելէ:

— Իր գրասենեկին մէջ, պատասխանեց սպասաւորը:

— Գացէ՛ք իրեն իմաց տալ թէ՛ այսօր կանուխ ճաշել կը փափաքիմ, կարեւոր այցելութեան մը պատճառաւ: Նախ, կտոր մը փայտ եւս նետեցէք կրակը:

Սպասաւորը տիկնոջ հրամանը կատարելէ յետոյ, դուրս ելաւ:

Տիկին Պրըվան նստաւ՝ լրագիր մը սուած վաւարանին քով, ու երբ տարօրինակ աղմուկ մը լսեց, ծալլեց զայն եւ ցատքեց:

Նոյն վայրկենին դուռը յանկարծակի բացուելով՝ ինը տասը տարեկան երկու տղա՝ զաքներ՝ որոց մին կը հալածէր միւսը, սրահին մէջ նետուեցան. հալածուողը յառաջացաւ մանկամարդ կնոջ բազուկներուն մէջ ճչելով՝ «Մայրի՛կ, մայրի՛կ, պաշտպանէ զիս»:

Միւսը արձանացած քնաց սրահին շէմին վրայ, փրփրած ու գունատ:

— Ի՞նչ է նորէն, հարցուց մանկամարդ կինը, փաթթելով իր բազուկներով մանուկը որ արդէն իր պաշտպանութիւնը կը խընդրէր և խոփոռ ակնարկ մը նետելով՝ անոր ընկերին վրայ:

— Ձեր տղան ինձ զարկաւ, տիկին, ըսաւ այս վերջինը՝ ճակատը կարմրած, աչքերը ոգեւորուած:

— Սուտ է, մայրիկ, ընդմիջեց տղան, առատ արցունք թափելով, ժիւլէն խնդրեք էի որպէս զի գծագրութիւնս սրբագրէ, եւ տմարդօրէն մերժեց :

— Ինչո՞ւ համար մերժեցիք, հարցուց տիկին Պրըվան՝ ժիւլին :

— Որովհետեւ ձեր տղուն չհնազանդելու համար խնդիրքը չկատարեցի, տիկին, պատասխանեց ժիւլ լրջութեամբ. որովհետեւ մօրս կենդանագիրը ընդօրինակելու զբաղած էի, եւ չէի ուզեր պարսպատեն անցընել գէշ գծուած Սափփովի գլուխի համար :

— Ձէի՞ք ուզեր, յարեց տիկին Պրըվան բարկութեամբ, միտքերնիդ պահեցէ՛ք, պարոն, թէ՛ որովհետեւ տղուս հետ դաս չը սորվեցի կը վշտացնէք զիս, ան օր մը հարիւր հազար լիրա եկամուտ պիտի ունենայ եւ լորտի տիրոջս . . . :

— Տխողոսի համար չարաչար չեմ ծաղրուիր, պատասխանեց ժիւլ խստութեամբ, եկամուտին գալով, եթէ հայրս ինձ չթողուէս իմ աշխատութեամբս կը շահիմ :

— Իրա՛ւ, պոռաց տիկին Պրըվան գթացողի մը դէմքով. եւ սակայն ինչ սպասել պնդադուլիսէ մը որ չուզեց զիս իր մայրը կոչել :

— Ո՛չ, տիկին, պատասխանեց ժիւլ, որուն կապուտիկ աչուկներէն առատ արցունք ժայթքեց, չէ՛. դուք չէք իմ մայրիկս, իմ մայրիկս զիս կը սիրէր, ան մեռած է զիս գգուելով եւ դո՛ւք, դուք զիս երբեք գրկած չէք :

— Ձեզ գրկած չե՞մ . . . ապաշնորհ :

— Երբեք, ինչպէս գրկած էք ձեր տղան, տիկին. նաեւ իմ մայրս յանցանքներս հօրս չէր ըսեր, որպէս զի ան միշտ սիրէ զիս, եւ դուք՝ բան մը չըրած տեղս՝ երկու անգամ ըսիք, որով ան չսիրեր զիս այնչափ՝ որքան ձեր տղան, ձեր առաջին ամուսնոյն զաւակը, անգլիացիի մը զաւակը, անգլիացիի՛ մը, նոյն իսկ :

— Ամբարտաւան, գոչեց բարկութեամբ մանկամարդ կինը, ժիւլ շարունակեց :

— Տան մէջ մօրս տեղը բռնելով, պարտաւոր էիք, տիկին, ունենալ իր քաղցրութիւնը, մանաւանդ իր արդարամտութիւնը, վասն զի կը տեսնէք թէ, տղոց հետ պէտք է արդարադատ ըլլալ, նախ, է՛ս կը դա-

րանամ անիրաւութենէ, ասիկա՝ կը յայտարարեմ ձեզ :

— Ձգուշացե՛ք բարկանալէ, պարոն, ըսաւ Ալֆրէտ, եւ ծաղրածու ձայնով մը աւելցուց, պատիւ, մե՛ղք :

— Եթէ ձեզ տալիք խրատ մը ունիմ, ըսաւ ժիւլ, որ իր տեղը կեցած էր, անուշութեամբ պէտք է խաղաղիլ եւ մոռնալ ձեզի կսմթելս :

— Այո՛, բան մը պիտի չընէք ինձի, որովհետեւ մայրիկս կը պաշտպանէ ինձի :

— Ան ամէն ատեն չըլլար քովդ :

— Մայրի՛կ, ըսաւ Ալֆրէտ լալ ձեւացնելով, կ'ըսէ թէ քու չեղած ատենդ, ինձի պիտի ծեծէ :

— Դո՛ւն կեցի՛ր, կեցի՛ր, ըսաւ ժիւլ :

— Ձգուշացի՛ր տղուս դպչելու, ըսաւ տիկին Պրըվան :

— Ձեր տղան չաքար չէ՛, որ՝ դպչելով անոր՝ խորտակուէր :

— Եկո՛ւր նայիմ, կանչեց Ալֆրէտ իր մօրը բազուկներուն մէջ պահուլտած, վախկոտ ժիւլ, դէ՛հ եկուր նայիմ, քեզի եմ :

— Կը կարծե՞ս որ կը վախնամ, պատասխանեց ժիւլ, դէպի առաջ քայլ մը առնելով :

— Ձես վախնար, գիտեմ, բայց տեսնեմ ըսաւ Ալֆրէտ :

— Կը գթամ, յարեց ժիւլ, ուսերը թօթուելով :

— Դո՛ւն, վատի մը ճիգը կ'ընես, վատի՛ մը, աւելցուց Ալֆրէտ :

Այս բառը հազիւ արտասանուած էր, ժիւլ, կռուիները սեղմած դէպ յառաջ, Ալֆրէտին վրայ նետուեցաւ, բայց անոր զարնելու պահուն, իր այտին վրայ տիկին Պրըվանէ այնքան ուժգին ապտակ մը կերաւ որ, վայրկեան մը շուարեցաւ մնաց, բայց չուտով ուշարեցելով, մոռցած հարուածին սաստկութիւնը, իր մանկական երեւակայութեան մէջ կ'զգար միայն թըշնամանք, զոր ստացած կը կարծէր, իր պըզտիկ գլխուն մէջ անձնիւր վայրկենին վըրէթխնդրութեան հազար տեսակ միջոցներ յղացաւ, իր զգացմանց բազխիւնէն անշարժ, ամբողջ էութեամբ տակն ու վրայ կ'ըլլար. Ալֆրէտը պատժելու միջոց մը գտնելու համար չորս բոլորը կը նայէր, Յանկարծ, նըշմարելով սեղանը, յառաջացաւ դէպի հոն

ու դանակ մը առած, կատաղութենէն դող-
դոջ ձայնով մը պոռած:

— Ձգուչացէ՛ք, տիկին, որովհետեւ ձեզի
սպաննել կ'ուզեմ:

Ու երբ թեւը վերցուցած յառաջ եկաւ,
տիկին Պրըվան ալ ինքզինքը պաշտպանելու
համար դանակ մը առաւ: Նոյն միջոցին ժիւլ
զգաց թէ իր բազուկը զօրաւոր ձեռքէ մը
լռնելով՝ իր զէնքը առնուեցաւ: Եւ դար-
ձաւ տեսնելու համար յանդուգն՝ որ զինքը
զինաթափ կ'ընէր:

Հայրն էր:

Բ.

— Է՛հ, ըսաւ, ի՞նչ կը նշանակէ այս,
հարցուց Պ. Պրըվան, նայելով փոփոխակի
լը կնոջ, որ չափազանց տժգունած էր:
Ալֆրէտ իր գլուխը մօրը շրջագգեստին տակ
կը պահէր, եւ ժիւլ՝ թէեւ տրտում կ'երե-
ւէր, բայց ո՛չ յուսահատ:

— Այս կը նշանակէ թէ, պարոն Պրը-
վան, պատասխանեց տիկինը, այլ եւս չեմ
կրնար մի եւ նոյն երգիքին տակ ապրիլ,
քանի որ կայ ձեր խենդ ու կատաղի տղան:

— Ժիւլ, ըսէ ճշմարտութիւնը:

Ժիւլ պատասխանեց ակնածու շեշտով մը
և աներկիւղ:

— Բնաւ չեմ ստեր, հայր:

— Շարունակեցէք, պատասխանեց հայրը:

— Երբ մօրս կենդանագիրը կը գծագրէի,
Ալֆրէտ ինձմէ խնդրեց որ սրբագրեմ Սափ-
փովի գլուխ մը, որ չլակն է, եւ զայն ար-
դէն դասատուին ցուցունել տուած էի: —
« Երբ լմնցեմ », պատասխանեցի: — « Հի-
մա՛, ըսաւ, եթէ ո՛չ՝ մայրս կը կանչեմ »: —
« Ձեմ ուզեր, զիս հանդարտ թող », յարե-
ցի, եւ յետոյ առանց բառ մը արտասանե-
լու աշխատութիւնս շարունակեցի: Հագուստս
քաշեց, աթոռս հրեց, թեւս ետ մղելով՝
մօրս աչքը մատիտով խոշոր մը գծեց. բար-
կութենէս ինքզինքս չէի կրնար զսպել: Կը-
ւուփովս անոր սպառնալուս, նենգաւորը
ինձ զարնելով, մօրը քով փախաւ, զոր ա-
նիրաւարար կը պաշտպանէ:

— Դուք չա՛տ անպատկառ էք ձեր մօ-
րուն դատելուն մէջ, աւելցուց Պ. Պրըվան
խստութեամբ. դուք ինձի մի՛ ըսէք պատ-
ճառը. երբ ներս մտայ, ձեռքերնիդ դանակ
մը բռնած էիք:

— Որովհետեւ տիկինը ինձ ապտակ մը
զարկած էր, ըսաւ ժիւլ, ու այս խօսքերը
արտասանած ատեն կը դողար բարկութենէն:

— Պարոնը ինձի դանակ պիտի միտէր,
աւելցուց Ալֆրէտի մայրը դառնութեամբ:

— Ո՛հ, կարելի չէ՛, սիրելի բարեկամ,
պօռաց Պ. Պրըվան բարկութեամբ:

Ժիւլ գետին կը նայէր:

— Եթէ կ'ուզէք, իրեն հարցուցէք, ը-
սաւ իր կիներ:

— Պատասխանեցէ՛ք ուրեմն, պարոն,
ըսաւ իր հայրը աւելի վշտով քան դառնու-
թեամբ:

— Լա՛ւ, աւելցուց Պ. Պրըվան,

— Պարոն, կը տեսնէք թէ՛ յարեց տի-
կին Պրըվան լալով, այլ եւս չպիտի կրնամ
ապրիլ չար եղեռնագործի մը հետ, որ կ'ու-
զէ սպաննել զիս:

— Ո՛հ, տիկին, աւելցուց ժիւլ բարկա-
ցայտ դէմքով մը, նախապէս ձեզի զեկուցի
ինքզինքդ պաշտպանելու համար:

— Այսպէս ուրեմն, ստո՛յգ է, ժիւլ,
հարցուց Պ. Պրըվան, աչքերը իր զաւկին
վրայ տնկած:

— Հայրի՛կ, ըսաւ ժիւլ ձեռքերը կցե-
լով, կ'երգնում որ դանակը չար դիտաւո-
րութենէ մը դրդեալ չառի, կ'երգնում, հայ-
րիկ:

— Ո՛չ, աւելցուց տիկինը հեգնակի, եր-
բէք գէշ դիտաւորութիւն չունէիք տղուս
զարնելու՝ բռունցքով անոր վրայ նետուելով:

— Այդ տարբեր է, տիկին, նպատակս
անվնաս հարուած մը տալ էր:

Մնացեալն յաջորդով Կ. Յ. Տէվէլեմն

ՀԱՐՈՒՍՏ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Երիտասարդ մը հարուստ վաճառականի
մը քով իբր պաշտօնեայ մտած էր: Օր մը
իր տիրոջ ներկայացաւ եւ այնպիսի ձեւով
մը՝ որով վստահ էր թէ անոր համակրու-
թիւնը պիտի գրաւէ, դրամական օգնու-
թիւն ուզեց անկէ գործի ձեռնարկելու հա-
մար. միանգամայն ամէն ապահովութիւն
տալով անոր դրամին վճարման համար:

Վաճառականը ուշադրութեամբ մտիկ ը-
նելէ յետոյ հարցուց:

— Կը խմէ՞ք դուք, բարեկամ:
— Երբեմն, երբ առիթը ներկայանայ:
— Խմելէ դադրէ՛, տարի մը բնաւ մի խմեր եւ այն ատեն եկուր:

Երիտասարդը խմելը մէկդի դրաւ եւ տասն երկու ամիս վերջը ներկայացաւ իր տիրոջ:

— Հիմա տեսնենք հարցուց, միլիոնատէրը, կը ծխէ՞ք:

— Տէր իմ, չեմ կրնար ո՛չ ըսել:

— Ծխելէ դադրէ՛, սիրելի բարեկամս, տարի մը մի՛ ծխեր եւ ինձ տեսնել եկուր, երիտասարդը իր գրասեղանին առջեւ անցաւ. ա՛լ չծխեց տարի մը եւ նորէն ներկայացաւ իր տիրոջ:

— Բայց պարոն Ճօն, թատրոն կը յաճախէ՞ք:

— Այո՛ տէր իմ, շատ անգամ:

— Ա՛լ մի երթար, տարի մը մի՛ երթար եւ ես քու գործդ ամբողջովին պիտի տեսնեմ:

Բայց երիտասարդը մէկ մ'ալ իր տիրոջը չդիմեց: Բարեկամներէն մին հարցուց թէ՛ վերջին փորձ մըն ալ չէ՞ր ըներ. պատասխանեց.

— Մարդուկին միտքը լաւ չէի հասկըցած: Ըսել կ'ուզէր որ եթէ տարի մը չծխեմ եւ թատրոն չերթամ, կարող պիտի ըլլամ ամսականներէս աւելցնել ինձ պէտք եղածը:



ՄԱՐԴՈՒՆ ԴՐԱՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՏԵՆՁԸ

Ինչպէս որ լայնատարած ովկիանոս մը՝ որչափ ալ հսկայ կոհակներով գետեր և առուակներ երթայ՝ չի կշտանար. միշտ զանոնք կը կլլէ իր անհուն ծոցին մէջ, նոյնպէս ալ մարդս երբեք չի յազենար դրամ դիզելէ:

Ճիշտ այս վերի ըսածս կարկառուն կերպով հաստատելու համար ձեզի պատմութիւն մը պիտի պատմեմ:

Ժամանակաւ պզտիկ գիւղի մը մէջ Բարթոլդիմէոս անուն փայտահատ մը կ'ապրէր, միս մինակ էր, իր կինը անգաւակ մեռած էր 22 տարեկան ծաղիկ հասակին մէջ: Իր կնոջ մահէն յետոյ ինքզինքը գեղխութեան տալով՝ բոլոր ինչքը փճացուց. ո՛չ ցանելու

արտ եւ ոչ ալ այգի մնաց ձեռքը, բայց միայն էշ մը՝ որով փայտ կտրելու կ'երթար իր ապրուստը հայթայթելու համար, շատ սէր ունէր այս հեզ կենդանիին վրայ, անոր կանակը կը շփէր եւ խողտցնելով հաճոյք կ'պգար: Զմրան ցուրտ օր մը որ սաստկաշունչ եւ ձիւնախառն քամին, կարծես ամբողջովին կործանել կ'ուզէր պզտիկ հիւզակը, ակամայ Բարթոլդիմէոս աղբար փայտի երթալու կը պատրաստուէր որ ծախելով քաղքէն քիչ մը հաց առնէ, քանզի հացի պաշարը սպառած էր: Ուստի ափ մը գարիով քիչ մըն ալ յարդ տուաւ իշուկին, յետոյ խարխուլ սենեակին մէջ նստելով սկըսաւ կօշիկին կապերը շտկել: Յանկարծ սենեակին դրան բացուելու ճռնչիւնը լսեց որ ուժով պատին զարնուեցաւ: Տանտէրը այլալլած՝ լաւ հագուած մէկը տեսաւ որ հաստ գօտի մը կապած էր մէջքը, բարեւ տալով ներս մտաւ ու տեղաւորուեցաւ փայտահատին քով: « Ո՛ւր պիտի երթաս այս ցուրտին », հարցուց օտարականը, տեսնելով գիւղացիին տրեխին կապերը կապելը որ շատ գործածութենէն մաշած էր: — « Փայտի երթալու ստիպուած եմ, որպէս զի ծախելով քիչ մը կերակուր գնեմ, գոնէ անօթի չի մեռնիմ », մրմնջեց Բարթոլդիմէոս:

— Է՛հ, ըսաւ օտարականը, ինձ ալ քեզի պէս դժբաղդ մէկը պէտք է, իմ անունս Յաջողութիւն է, ինձմէ կը բղխին բոլոր մարդոց յաջողութիւնները: » Այս ըսելով ոտքի ելաւ եւ նշան ըրաւ որ իրեն հետեւի: Երկուքն ի միասին ձիւներուն մէջէն մղոնի մը չափ յառաջացան եւ հասան անտառ մը որ լեցուն էր ոստախիտ ծառերով, որոնց մերկ ճիւղերուն ծայրերը ձերմակ վերարկուի մէջ թաղուած էին: Պ. Յաջողութիւնը կանգ առաւ եւ իր հաստ գօտիին տակէն քաշեց ոսկեզօծ պատեան մը, որուն մէջէն դուրս հանեց դանակ մը՝ որ մարդուս աչքերը կը խողտեցնէր:

Ողորմելի փայտահատը սարսափէն արձանացած էր. կծկուելով իր հին վերաբրկին ներքեւ, կը վախնար թէ մի գուցէ մարդը սպաննէ զինքը, և մտովի կ'ըսէր. « Ի՞նչ անխելքութիւն ըրի աս սրիկային հետ մինչեւ հոս գալով: » Փախչելու հնարք մը կը մտածէր: Մինչ այս խորհուրդներով յափշտակուած էր՝ յանկարծ Յաջողութիւնը

դանակը ձիւներուն մէջ մխեց, ու մէկէն ձիւներէն դուրս թափեցան շողշողուն կլորիկ ոսկիներ:

Բարթուղիմէոս զարմացած աչքերով կ'ուզէր խել զանոնք եւ մարդուն հրամանին անհամբեր կ'սպասէր, զանոնք իր թաշկինակին մէջ լեցնելու: Իր խնդիրքը կատարուեցաւ: ուրախութենէն ոտքերը դետնէն կը կտրէր, բեռը առնելով իր խրճիթը ուղղուեցաւ, իսկ Յաջողութիւնը հակառակ կողմը անտառին խորը: Տուն վերադառնալու ատեն կը խորհէր թէ այս դէպքը երա՞զ էր թէ ոչ իրականութիւն: Կը շօշափէր ոսկին, համոզուեցաւ թէ իրականութիւն է: Բայց ինչ յետոյ չար խորհուրդ մը զինք պաշարեց, ոսկիներէն գոհ չըլլալով՝ կ'ուզէր այն դանակը ձեռք ձգել, իր դանակը ուղտապանի կոշտ դանակ մ'էր: միտքը դրաւ որ իր բարերարին քով երթայ և զայն խօսքի բռնելով դանակը կողը մխէ: Եւ այն ատեն ինչ երջանկութիւն, աշխարհիս չափ դրամ ուղեր կրնար ունենալ: Ետին դարձաւ, Պ. Յաջողութիւն սպիտակ ձիւներուն մէջէն հանազա կ'որոշուէր, ուստի կայծակի արագութեամբ դարձաւ դէպի օտարականը և անոր քով հասաւ: անաշին փորձ մը փորձեց, բայց չի յաջողեցաւ, վասն զի Յաջողութիւն գիտէր անոր նպատակը, եւ համեստութեամբ ըսաւ, — « Գործդ գնա՛, ազնիւ բարեկամս, » բայց յամառ գիւղացին, և կորդ, երրորդ փորձ մը րբաւ, ամէն անամբն չ յաջողեցաւ: անաշին ապա գեղացիներուն ոսկին

Քրչ վերջը, փայտահատներու խումբ մը եկաւ, փոխանակ այս տեսարանը տեսնելով խղճալու, մերձակայ փոսը գլորեցին, քանզի իրենց ճամբան կը գոցէր, նաեւ իրենց կենդանիները կը խրտչեցնէր:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԶԱՆԿԵԱՆ

Իբրանոսեան վարժ. Գ. կարգի սաներէն

ԵՐԿՐԱԾԱՐԺՆԵՐԸ

Երբ որ երկրիս ներքին կազմութիւնը ճանչնալու խնդիր եղաւ, շատ գիտուններ պնդեցին թէ հեղուկ վիճակ մը չկրնար տիրել հոն, որովհետեւ այդ ստորերկրեայ ու-

կէանոսն ալ դուրսի ջուրէ ովկէանոսներուն մակնթացութեան ու տեղատեղութեան պէս՝ լուսինին ձգողութեան ազդեցութեան տակ շարժումներ պիտի ունենար՝ մինչդեռ մինչեւ հիմայ ատանկ բան մը չէր ճշդուած, հապա՛, ներքին ջերմութիւնը ընդունելով՝ երկրիս կեդրոնը կազմող հրաշէկ հեղուկ նիւթերը թանձրացած ըլլալու էին՝ իրենք իրենց վըրայ ըրած ահագին ճնշումին շնորհիւ եւ կազմած միջուկ մը՝ նման նոր կեղեւ կապող կաղնիի մը կամ սալորի մը կուտին:

Գիտական աշխարհի մէջ հեղինակութիւն ունեցող ժողովրդական դէմք մը՝ Հանրի տը Բարվիլ՝ ձեռք առնելով այս տեսութիւններուն թելը, կը բացատրէ թէ իրաւ երկրիս կեդրոնի հեղուկ ովկէանոսը՝ լուսինի ձգողութեան ազդեցութիւնը կը կրէ և իբր ատոր արգասիքը կը ներկայացնէ երկրաշարժներու պարբերական սաստկութիւնը:

Անգամ մը աչքերնիդ նետեցէք երկրագունտը ամբողջ ներկայացնող քարտէսի մը վրայ և այս տարի երկրաշարժ եղած տեղերը մատիտով նշանակեցէք: Ասիական Թուրքիա, Շամսի, Նոր Զելանտա, Մարթինիք, Հարաւային Ամերիկա, Սէն Վէնուան՝ ահագին ցնցումներ, կեդրոնական Ֆրանսա, Լիզպոնի շրջակայքը, Յունաստանի մէջ՝ թեթեւ ցնցումներ: Կը տեսնէք որ գըրեթէ ամբողջ աշխարհիս մակերեսով ղիւլային ջերմէ մը բռնուած է: Ե ո՞վ գիտէ ինչ սոսկալի երկրաշարժներ պատահած են Ափրիկէի ամբողջ կեդրոնի ընդարձակութեամբ երկիրներու մէջ: Չինական կայսրութեան երկիրներու չափ խոշոր դաւառներուն մէջ և բեւեռներուն վրայ, ովկէանոսներուն յատակը, վերջապէս բոլոր այն տեղերը ուր քաղաքակիրթ մարդուն ոտքը դեռ չէ կոխած: Ահա՛ երկրաշարժներու այս համաճարակը միեւնոյն տարուան մէջ և միւս կողմէ դիտեցէ՛ք որ նման աղէտի մը պատմութիւնը կարդացինք ասկէ ճիշդ 19 տարի առաջ Քրօքաթօայի բորբոքման առթիւ, որու զոհ կ'երթար Սունտի արշիպէղագոսը: Մի՛ մոռնաք նաեւ թէ ամէն 19 տարին անգամ մը լուսինը իր առաջուան դիրքը կ'առնէ երկրին հանդէպ:

Եւ ինչո՞ւ չընդունիլ որ լուսինը կրնայ ազդել երկրիս ներքին մասին վրայ: Եթէ ծովերու ջուրերը լուսնի ձգողութեան ազ-

դեցութեան կը հնազանդին՝ ներքին հրեշտակէն ովկէանոսն ալ կը հնազանդի անոր՝ թէեւ իր ծառային մեծութեան նայելով տարբեր աստիճանի վրայ պիտի ազդուի անկէ։ Տասնըինը տարին անգամ մը լուսինը երկրիս շուրջը զծած ծիրին ամէնէն ստորին կէտին վրայ երբ կը հասնի՝ այդ տարին երկրիս վրայ երկրաշարժերու թուական մը կ'ըլլայ. և չէ թէ միայն կրնանք այդ տարիները որոշել, հապա երկրաշարժ պատահելիք օրերն ու ամիսները, ինչպէս

Երկրիս կեղեւը կազմուած է իրարու վրայ շարուած կարգ կարգ հողերէ՝ կրաքարէ, աւազէ, կաւէ ևլն։ Ասոնց մէջէն կրաքարը, աւազը, գրեթէ բոլոր ժայռերը՝ իրենց վրայ գտնուած ջուրը կը ծծեն և իրենց տակը կ'անցնեն. ինչպէս որ շաքարի կտորի մը ծայրը եթէ ջուրի մէջ դնեք, ամբողջ կտորը կը թրջի. արդ՝ ծովերուն, գետերուն, անձրեւներէ կազմուած ճահիճներուն ջուրերը միշտ կը ծծուին ջրաթափանց խաւերէ, մինչեւ որ հասնին կաւի



Սեւ-Բիեռ քաղաք

այս տարուան տաղնապալի ամիսն էր Մայիս, և օրերը 3, 8, 11։

Այս տեսութեան վրայ կարծիք յայտնել մեզի չիյնար, մինակ կ'արձանագրենք զայն իբր գիտական նորութիւն մը։

ՇԱՄԱՆԻ. — Սէն-Բիէր աւելի Բըլէ լեռան դուրս տուած կրակէն կործանեցաւ քան թէ երկրին ցնցումներէն. մինչդեռ Շամախիի աղէտը բոլորովին երկրաշարժի արդիւնք էր։ Հոս ալ աւերիչ տարրերը ջուրն ու կրակն էին։

Խաւի մը ինչպէս գիտեք, կաւը կը բռնէ ջուրը և չթողուր որ իր մէջէն գտուի։ Ուրեմն ջուրերը լեցուելով անոր վրայ ներքին լիճ մը պիտի կազմեն։ Հազարումէկ պատճառներ կրնան կաւի այդ խաւը պատռել։ Ինչպէս ներքին բլգում մը կամ ջուրը աւելի շատնալով հեղեղ մը կազմելը եւլն։ Մթերուած ջուրը բացուածքէն պիտի հոսի մինչև որ կաւի նոր խաւի մը հանդիպի ուր կանգ պիտի առնէ և կամ միշտ ծծուելով կրաքարային ժայռերէ պիտի հասնի այն պահա-

նին ուր իրեն կազմած շոգիին ճնշումը բա-
ւական պիտի ըլլայ երկրիս կեղեւը դղրդե-
լով ճամբայ մը բանալու դէպի դուրս: Ահա՛
այս էր մեծ երկրաշարժներու պատճառը.
նոյնն է նաեւ Շամախիի համար: Սխալ է
կարծել թէ ցեխի հրաբուխները միայն Շա-
մախիի կործանող երկրաշարժը յառաջ բե-
րին. քանի որ այդ ցեխի ժայթքումները
որոնք նաւթի հոտ մը կը բուրեն, աշխար-
խարհիս սկիզբէն ի վեր գոյութիւն ունին
անթիւ անհամար բերաններով, և ասի-
կա տարօրինակ բան մը չէ նաւթաբեր հո-
ղեր պարունակող երկրի մը համար: Կրնաք
նաեւ յիշել թէ Շամախիէ 8-10 քիլոմէթր
հեռու հողը բարձրանալով լեռ մը կազմած
է՝ որ բոլոր հրաբուխի մը երեւոյթները կը
ներկայացնէ:

* * *

Երկրիս կեղեւը բնաւ կատարեալ հան-
գասութիւն չունի. ամէն վայրկեան տա-
տանումի մէջ է: Առէք 4-5 մէթր երկայ-
նութեամբ երկաթէ սլաք մը որու մէկ ծայրը
չատ նուրբ ասեղ մը կը ներկայացնէ. գրե-
թէ մինչեւ կէսը միւսեցէք հողին մէջ և դի-
տակի մը միջոցաւ նայեցէք բարակ ծայրին
պատկերը հեռուն դրուած հայելիի մը մէջ.
պիտի տեսնեք որ սլաքին պատկերին քո-
վերը պղտոր են և կամ սլաքը լայնցած է:
Ըսել է որ երկաթէ ցողը կը դողդոջայ եւ
իր շարժումներն ալ կ'առնէ հողէն ուր մըխ-
ուած է:

Երկրաշարժի ցնցումները անշուշտ ուղ-
ղութիւն մը ունին. այդ ուղղութիւնը որո-
շելու համար գործիքներ կան: Ասոնք կը
բազկանան պարզապէս փայտի հաստը ձո-
ղերէ որոնք գետնի վրայ գետեղուած են և
որոնց գագաթին վրայ կարելի եղածին չափ
մեծ ծանրութիւններ դրուած են: Մասնա-
ւոր արձանագրիչ գործիքներ կան որոնք
այդ ձողերուն ունեցած ճօճումները կ'ար-
ձագրեն թուղթի մը վրայ կոր գիծերու
ձեւով՝ ինչպէս կ'ըլլայ սովորաբար ջիւ-
մաչափի ու ծանրաչափի համար: Այս գոր-
ծիքներէն մին անանկ դրուած է որ մի-
նակ արեւելքէն արեւմուտք կը տատանի,
միւսը՝ հիւսիսէն հարաւ, իսկ երրորդ մը որ
զսպանակէ մը կախուած է՝ վարէն վեր կը
ցնցուի: Ասոնք սովորական ասենները չեն
գործէր, բայց երբ երկրաշարժ պատահի

անմիջապէս ելեքտրական հաղորդիչ մը գա-
նոնք շարժման մէջ կը դնէ:

Երբ երկրաշարժը դադրի՝ գիտունը գոր-
ծիքներուն քով գալով արձանագրիչներուն
վրայ կ'ունենայ երեք գիծեր. մին կը ներ-
կայացնէ թէ գետինը որքան ցնցուել է ա-
րեւելքէն արեւմուտք ուղղութեամբ, միւսը
հիւսիսէն հարաւ, իսկ երրորդը՝ վարէն վեր.
կ'առնէ այդ գիծերը և անոնցմով խորա-
նարդ մը կը չինէ՝ որու իւրաքանչիւր կողմը
տրուած գիծերուն կը հաւասարի եւ ճիշդ
անոնց դիրքը կը բռնէ: Կը գծէ այս խորա-
նարդին տրամագիծը եւ ահա երկրաշարժին
ուղղութիւնը ներկայացնող գիծ մը կ'ունե-
նայ որ միեւնոյն ժամանակ ցնցումին համե-
մատական զօրութիւնն ալ կը ցուցնէ:

Եթէ քանի մը տարբեր տեղեր նոյն դի-
տողութիւնը ըլլայ միեւնոյն ժամանակ, ըս-
տացուած գիծերը շարունակուած ենթադ-
րելով՝ ուր որ զիրար կը կտրեն (երկրիս
տակը) հոն է որ տեղի կ'ունենայ ցնցումը
յառաջ բերող երեւոյթը, և ասկէ՝ դիւրին
է հետեւցնել թէ երկրիս երեսէն քանի՞
մէթր վարը տեղի կ'ունենայ այդ երեւոյթը:

2. Ն. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

802 ՈՒՆԸ

Արմատէն ետք անցնինք ցօղունին:

Ամէնքնիդ ալ գիտէք որ ցօղունը բոյսին
այն մասն է՝ որ վարէն դէպի վեր կ'ուղղուի,
և իր վրայ յառաջ կը բերէ ճիւղերը: Ան-
շուշտ դուք տեսած էք զանազան տեսակ
ցօղուններ. քանի որ կը հարցնէք ինծի. —
Անոնք ալ արմատներուն պէս զանազան
տեսակ բաժանումներ ունին: — Այո՛, ա-
նոնք ալ տեսակներու բաժնուած են, իրենց
հաստութեան, ապրելու տեւողութեան, ներ-
քին կազմութեան եւ արտաքին ձեւին հա-
մեմատ:

Նախ պէտք է որ նկատողութեան առ-
նենք ցօղուններու ապրելու տեւողութիւնը:
Մենք գիտենք որ ցօրենին, լուբիային, գա-
րիին եւայլն ցօղունները՝ որոնք բարակ են
եւ տկար, մէկ տարի միայն կը պահեն ի-

րենց թարմութիւնը, եւ անկից ետք կը չորնան, այսինքն կը մեռնին: այս տեսակ բոլոր ցօղունները կը կոչուին միամեայ կամ խոտային: Ուրիշ բոյսեր ալ կան, որոնց ցօղունները չա՛տ երկար ժամանակ կ'ապրին, ինչպէս տանձենին, խնձորենին եւայլն, ասոնք ալ կը կոչուէն բազմամեայ կամ փայտային ցօղուն: Դարձեալ, նկատելով ցօղուններու ներքին կազմութիւնը զանոնք կը բաժնենք քանի մը տեսակներու: յիշեմ՝ որու իբր օրինակ կրնանք տալ չաքարեղէքը, գոգաւոր կամ սնամեջ՝ ինչպէս պարզ եղէգը: Անոնց արտաքին ձեւին համեմատ ալ կըրնանք բաժանումներ ընել, ինչպէս գլանաձեւ, կոնաձեւ եւայլն:

Ցօղունները իրենց ապրելու միջավայրին նայելով երկու տեսակներու կը բաժնուին, օդատուն և հողատուն: Օդատուններն անոնք են՝ որ հողին մակերեսէն դուրս, դէպի վեր կը բարձրանան, ինչպէս ձեր ճանչցած բոյսերէն մեծ մասին ցօղունները: (Պս. 1) — Բայց



Պատ. 1

ի՞նչ է հողատուն ըսուած ցօղունը. — Ուրեմն չէ՞ք ճանչնար զանոնք. բառէ՞ն ալ չէք հասկընար. հողով ապրող, կամ շաւ ևս հողին մէջ ապրող ցօղուններ. կրնանք երթալ դաշտը եւ հոն ձեզի օրինակներ պիտի տամ: Ահաւասիկ, քիչ մը անդին սոխի տունկ մը կայ կարծեմ. հանեցէք անիկա: Աղէ՛կ, ի՞նչ են ասոնք, սա ուռեցքները՝ զոր հողին մէջէն հանեցիք:

— Ըսել կ'ուզէք թէ ասոնք ձեր ըսած հողատուն ցօղուններն են. բայց շատ կը սխալիք. անոնք սոխին արմատներն են:

— Շա՛տ աղէկ, հիմա պիտի համոզուիք

թէ անոնք ցօղուններ են եւ ոչ թէ արմատ: Պատասխանեցէք տեսեմ, արմատը կրնա՞յ իր վրայ տերեւներ կրել, անշուշտ ո՛չ. բայց ահա՛ տեսէք սա տերեւները՝ որ կը գտնուին ձեր արմատ կարծածներուն վրայ. ուրեմն ասոնք ցօղուններ են՝ որ հողուն մէջ մնացած են եւ կ'ապրին գաղտուկ. տերեւներ արձակելով հողէն դուրս: Եւ կը տեսնէ՞ք սա սոխին տակի թելիկները, ասոնք մակաբոյս արմատներ են՝ որ անոր վրայ յառաջ եկած են: (Պս. 2 սխտր):

Մէջտեղ բերենք տանձենիի տունկ մը և քննենք անոր արտաքին մասը. ասոր ցօղունը երկար կանանչ մաս մըն է. արդէն գարնան մէջ ըլլալով անոր վրայ տեղ տեղ




Պատ. 2

տերեւներ յառաջ եկած են. այս տերեւներուն ցօղունին կպած տեղը կը կոչուի հանգոյցներու միջեւ գըտնըւող տեղը՝ միջնահանգոյց. բայց կը դիտէ՞ք. ամէնէն վերի միջնահանգոյցը շա՛տ փոքր է, անոր վարինը աւելի մեծ այսպէս շարունակաբար: (Պս. 3)

Հիմա կրնանք քննել զանազան տեսակ բոյսերու ցօղուններուն ներքին կազմութիւն:

Խոտային բոյսերու ցօղունը ներքին չորս մասեր ունի (Պս. 4) ուղեղ կամ միմուկ (Ա),


փայտային հիստումի մը (A) կեղեւը (Գ) եւ վերնամասին : Ճիշդ այս կազմութիւնը ունին նաեւ փայտային բոյսերու ցողունները՝ իրենց առաջին տարիներուն մէջ : Բայց հետագահեալ կը զարգանան անոնք, եւ ուրիշ քանի մը խաւեր ալ առաջ կուգան : Այսպէս, փայտային զարգացած ցողունները ունին



Պատ. 3

հետեւեալ խաւերը, միջուկ, միջուկին շրջապատը, փայտային հիստումի վերածնունդ, կեղեւ եւ վերնամասի :

Ուղեղ կամ միջուկ ըստաճը կը գտնուի ցողունին մէջտեղը, եւ կը բաղկանայ բազ-



Պատ. 4

մաթիւ խորշերէ :

Փայտային հիստումները՝ որ ցողունի մը կարեւոր մասերէն մէկն է, բաղկացած է փայտային համակեդրոն շարքերէ՝ որոնք կը կազմուին փայտային տունկերու ցողունին մէջ, ամէն տարի մէկ մէկ հատ. այնպէս որ ծառի մը տարիքը հասկնալու համար կրնանք անոր ցողունը կտրել լայնու-

թեամբը, եւ համարել այդ փայտային շարքերը. որչափ որ շրջանակ կենայ, այնչափ տարիներ բոլորած է ծառը (Պատ. 4). փայտային հիստումները կազմուած են խողովակներէ՝ որոնք արմատին խողովակներուն միացած են :

Կեղեւը ցողունին այն մասն է՝ որ զանկա կը պատէ դուրսի կողմէն. ասիկա իր կարգին ունի քանի մը հիստումներ՝ որոնց վրայ ծանրանալ շարժեր հոս : Կեղեւը տունկին առաջին տարիներուն կանանչ եւ ողորկ կ'ըլլայ, բայց հետագահեալ կը կորսնցնէ իր կանանչ գոյնը եւ ողորկութիւնը :

Պէտք է գիտնալ որ փայտային հիստումներն եւ կեղեւին մէջտեղը կը գտնուի հեղուկ մը որ խորշերէ կազմուած մասն է. ասիկա կը կոչուի վերածնունդ շերտ՝ որ ցողունին լայնակի աճման նպաստող մաս մըն է, որ տրամադիր է կազմելու թէ՛ փայտային հիստումներ, եւ թէ՛ կեղեւային խաւեր : Ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ միջուկին բոլորտիքի փայտային հիստումի խաւերը իրարու շատ մօտ կը գտնուին, բայց քանի երթան կը լայնան, եւ ամէնէն նոր խաւը ամէնէն լայնն է :

Ամբողջ ցողունը, ճիւղերը եւ նոյն իսկ արմատը ծածկուած են վերնամաշկովը՝ որ պարզ խորշիկներէ կազմուած է :

Ասկէ ետք կրնանք անցնիլ ցողունի պաշտօնին : Ծողունները իրենց վրայ կը կրեն ճիւղերը, տերեւները, բայց անոնցմէ զատ կը կատարեն ուրիշ պաշտօն մը՝ զոր չենք կրնար մասնալ. անոնք իրենց խողովակներովը արմատէն եկած սնունդը վեր կը տանին ու կը բաժնեն բոյսին զանազան մասերուն մէջ : Բայց հոս չլինար անոր պաշտօնը. կան հողասուն ցողուններ՝ որ բոյսին հարկաւոր եղած սնունդը իրենց մէջ կ'ամբարեն, պէտք եղած ատեն դուրս հանելու համար, ինչպէս գետնախնձորին հողին մէջ գտնուող այտուցները՝ որոնք ցողուններն են :

ԱՇՈՏ 8. ՊԱՉՊԱՆԱՅ



Գ. ԻՏԱԿԱՆ ՎԷՊ

ԺԻՒՆ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵՂՈՆՆԵ

(Շաբաթական 20րդ թիւն)

ԻԶ.

Վերջին խօսակցութեան վրայ երկու շաբաթ անցեր էին առանց նշանակելի բան մը պատահելու։ Օգոստոս 7ին երկրիս երեսէն մինչեւ 30 մղոն վարը կը գտնուէինք։

Այդ օրը ճամբան քիչ մը ծռած ուղղութիւն մը կ'առնէր։ Ամէնէն առաջ ես կը քալէի, ելեքտրական լապտերներէն մին ձեռքս էր, իսկ միւսը հօրեղբայրս կը բռնէր։ Կրանիթի խաւերը քնելու կ'զբաղէի։ Յանկարծ, ետիս նայելով տեսայ որ մինակ եմ։ «Քիչ մը շուտ քալած ըլլալու եմ», ըսի միտքէս, եւ կամ Հանս ու հօրեղբայրս կանգ առած են։ Ետ դառնանք։

Եկած ճամբէս ետ դարձայ։ Քառորդ մը քալեցի, չորս դիս նայեցայ, մարդ չկար, կանչեցի, պատասխան չառի, ձայնս կը կորսուէր խոր արծազանքի մը մէջ։ Վրայէս պաղ մը անցաւ։

«Քիչ մը հանդարտինք, ըսի բարձրաձայն, վստահ եմ որ ընկերներս պիտի գտնենք, ճամբան մէկ հատ է, ես շատ յառաջացած էի, հիմայ ետ դառնանք»։ Կէս ժամ եւս եկած ճամբէս ետ դարձայ։ Երբեմն ահանջ կուտայի թէ ձայն մը չիգա՞ր ականջիս։ Բայց տարօրինակ լուութիւն մը կը տիրէր։ «Նայինք, կը կրկնէի, քանի որ մէկ ճամբայ մը կայ եւ անոնք ալ այդ ճամբուն վրայ են, ուրեմն իրար պիտի գտնենք։ Պրոցէ ինծի չտեսնելով կարծեն թէ ետ մընացեր եմ, եւ իրենք ալ ետ դառնան։ Եթէ քիչ մը շուտ քալեմ պիտի հասնիմ անոնց, վստահ եմ։ Մանաւանդ որ ճամբաս չեմ կրնար կորսնցնել, գետակը միշտ ոտքերուս տակը ըլլալով»։ Եւ ծռեցայ որ անոր ներկայութեան վստահ ըլլամ ձեռքս մէջը թրու-

ղելով։ Սոսկում... գետը չէր հոսեր, ոտքերուս տակ չոր ու խորտուրորտ ժայռը կար մինակ։

Ի՛է.

Յուսահատութիւնս նկարագրել անկարելի է։ Մարդկային լեզուին մէջ չկայ բառ մը զգացածս բացատրելու համար։ Ողջ ողջ թաղուած էի, եւ անօթի ծարաւ մեռնելու հեռանկարը կը ցցուէր մտքիս առջեւ։

Բայց ի՞նչպէս գետին ընթացքէն բաժնուեր էի։ Անշուշտ երբ ես բացուած ճամբու մէջ կը մտնէի, գետը՝ հողին ծուռութիւններուն հետեւելով ուրիշ բացուածքէ մը կ'անցնէր իրեն հետ տանելով միւս ճամբորդները։ Ի՞նչպէս ետ դառնալ, քարացած հողին վրայ ոտքերս բնաւ հետք մը չէին ձգեր։ Գլուխս կը ճաթեցնէի ճար մը գտնելու համար, կացութիւնս մէկ բառի մէջ կ'ամփոփուէր. կորսուած էի։

Այո՛, կորսուած՝ անանկ խորունկութեան մը մէջ զոր չէի կարող երեւակայութեանս մէջ սեղմեցնել։ Կը ջանայի աշխարհիս իրերը մտքիս առջեւ բերել։ Համպուրկ, Քէօնիկկիրասի տունը, խեղճ Կրայիւպէնս, արագ արագ կ'անցնէին մոլոր յիշողութեանս առջեւէն։ Վայրկենական զառանցանքի մը մէջ տեսայ ճամբորդութեան ամբողջ պարագայները. ծովէն անցնելիս, Իսլանտա, Պրն, Փրիտրիքսըն, Սնէֆէլս։ Ինքնիրենս կ'ըսէի որ եթէ յոյսի նշոյլ մը իսկ մնար ինծի համար, ատիկա յիմարութեանս նշանը պիտի ըլլար. ուստի աւելի լաւ էր յուսահատիլ։

Յիրաւի, ո՞ր մարդկային արարած կըրնար գլխուս վրայ գոցուող կամարները բանալ եւ ինծի երկրին երեսը հաներ։

— Ա՛խ, հօրեղբայր, գոչեցի յուսահատութեան մէկ վայրկեանիս։

Յանդիմանութեան միակ բառը եղաւ ասիկա զոր արտասանեցի, որովհետեւ կը հասկնայի խեղճ մարդուն զգացածը ինծի բնուած ժամանակ։

Երբ համոզուեցայ որ ամէն մարդկային օգնութեան հասողութենէ դուրս եմ, դիմեցի երկնային օգնութեան։ Յիշեցի մանկութեանս օրերը, մայրիկիս օրօրը՝ զոր համբուրելու տարիքիս մէջ մինակ ճանջած

էի: Աղօթեցի Աստուծոյ, և ապաշաւ՝ թէև քիչ մը ուշ՝ բայց սրտաբուխ եղաւ: Դէպի Նախախնամութիւն այս դարձս աղէկ ազդեցութիւն ըրաւ վրաս, միտքս քիչ մը հանգչեցաւ և կրցայ իմացական բոլոր կարողութիւնս ամփոփել գտնուած վիճակիս վրայ: Դեռ երեք շաբաթ ուտելիք ունէի, ջրդուրմս ալ լեցուն էր: Բայց չէի կրնար այս վիճակիս մէջ մնալ, ի՞նչ ճամբայ բռն-

ւած էր երբ յանկարծ դիմացս ելլող պատի մը վարնուեցայ: Ճամբաս գոցուած էր. անելի մը մէջ փակուած էի: Ըսեմ թէ ի՞նչ սոսկում, ի՞նչ յուսահատութիւն տիրեց վրաս երբ վերջին յոյսերս բաղխեցան կրանիթէ այս պատին: Հազարումէկ ճիւղաւորումներու բաժնուած այս լաբիրինթոսին մէջ կորսուած էի. ա՛յ մինակ մեռնիլ կը մնար, և այն ալ ի՞նչ մահ: Խօսիլ ուզեցի, բայց



նէի. վե՛ր ելլելու էի թէ վար իջնել:

Անշուշտ վեր ելլելու էի. միշտ զառիվերէն ելլելով անպատճառ Հանս-Պագէն բոժնուած տեղը պիտի հասնէի, Ա՛յ անկէ վերջ ուզած առեւնս կրնայի ետ դառնալ: Փրկութեան ճամբան ատ էր. ամէնէն առաջ գետը գտնելու էի: Ոտքի ելայ և երկաթապատ գաւազանիս կռթնելով ճամբաս ձեռք առի: Զառիվերը քիչ մը ցից էր, բայց միշտ յոյսով կը քալէի: Կէս ժամի չափ տե-

խուլ աղաղակ մը դուրս թռաւ չորցած շրթունքներէս:

Այս անձկութիւններուն մէջ՝ վերջին սոսկում մըն ալ աւելցաւ. լապտերս ձեռքէս իյնալով աւրած էր եւ չոկելու միջոց ալ չունէի: Լոյսը երթալով կը տկարանար և մարելու վրայ էր. մթնցած պատերուն վրայ շուքերը սկսան տատանիլ. թարթիչներս գոցելու կը վախնայի՝ չկրնանքներու համար փախչելու վրայ եզոզ այս լոյսին

վերջին հիւլէները : Վերջապէս յետին շող մը պլպլաց լապտերին մէջ եւ ալ խոր մութի մէջ թաղուեցայ : Ի՞նչ սոսկալի էր արձակած աղաղակս : Երկրիս վրայ, ամէնէն մութ տեղն իսկ լոյսը իր իրաւունքները կը պահէ : չառ տարտամ կ'ըլլայ, գրեթէ աննշմարելի կ'ըլլայ, բայց վերջապէս աչքը կարող է զայն գգալ : Իսկ հոստեղ՝ ոչինչ : Բացարձակ մթութիւնը՝ բաւին կատարեալ առումովը կոյր մը ըրած էր ինծի :

Գլուխս կորսնցուցեր էի : ձեռքերս դէպի առաջ երկնցուցած սկսայ վազել, միշտ վար իջնելով, պօռալով, ոռնալով, պատերուն զարնուելով, իյնալով ու ելլելով, դէմքս ու ձեռքերս արիւնջուայ, ամէն վայրկեան սպասելով որ դիմացս պատ մը ելլէ ու գլուխս անոր զարնուելով ջախջախուի :

Այս անգգայ արշաւանքս ո՛ւրտեղները ձգեց ինծի : բնաւ չպիտի գիտնամ ատրկա : վերջապէս ժամեր անցնելէ ետքը, բոլորովին ուժասպառ, ինկայ պատին երկայնքը ու ինքզինքս կորսնցուցի :

Ի՛նչ .

Երբ ինքզինքիս եկայ . երեսու արցունքով թրջուած էր : Ինկած ժամանակս վիրաւորուելով բաւական արիւն կորսնցուցեր էի : ա՛խ, ինչու մէկ անգամէն գլուխս չէր ջախջախուած :

Կամաց կամաց նուաղիլս զգացի, և անոր հետ միասին վերջին անշնչացումը : Դըղըրդուն ձայն մը ուշադրաւեց յանկարծ : կարծես կայծակ մը կ'որոտար և կը կորսուէր անդունդին խորերուն մէջ : Ականջ դրի թէ պիտի կրկնուի՞ նորէն . բայց քառորդ մը անցաւ առանց բան մը իմանալու : Փրթած ժայռի կտոր մը ըլլալու էր որ անդունդին մէջ կը գլորէր :

Պահ մը դիպուածով ականջս պատին կռթնեցաւ : դողացի : կարծես թէ խօսակցութիւն մը կը լսէի, հեռաւոր, տարտամ, անորոշ խօսակցութիւն մը :

— Զառանցանք է, մտածեցի :

Բայց ո՛չ : աւելի ուշադրութեամբ մտիկ ընելով ձայնի մրմունջ մը լսեցի : Թէեւ չէի հասկնար խօսուածները, սակայն վստահ էի որ խօսակցութիւն մը տեղի կ'ունենար : Քանի մը անգամ « ֆօրլօրատ » բառը զար-

կաւ ականջիս : ո՞վ էր խօսողը . անշուշտ Հանս կամ հօրեղբայրս : Եթէ ես անոնց խօսքերը կ'իմանայի, ըսել է որ անոնք ալ կրնային իմ ըսածներս լսել :

— Օգնութիւն, պօռացի բոլոր ուժովս, օգնութիւն :

Եւ մտիկ ըրի : Ականջս պատին վրայ պըտըտցնելով անանկ տեղ մը գտայ ուր ամէնէն աւելի յստակ կը լսուէր ձայները : Նորէն լսեցի « ֆօրլօրատ » բառը, յետոյ հօրեղբօրս ձայնը առի որ անունս կուտար :

Հիմա՛յ կը հասկնայի . ուսուցչապետը բերանը գետնուղիին պատին տալով կը խօսէր և այդ պատը հեռախօսի թելին պէս ձայնը մինչեւ ինծի կը հասցներ : Բերանս ժայռին կցեցի և կրցածիս չափ ուժով պօռացի :

— Լիտենպրօք հօրեղբայրս :

Քանի մը երկվայրկեան սպասեցի, և պատին մէջէն ձայն մը ականջիս հասաւ :

— Աքսէ՛լ, Աքսէ՛լ, դո՛ւն ես :

— Այո՛, այո՛, պատասխանեցի :

— Զաւա՛կս, ո՛ւր ես :

— Ամենախոր մթութեան մէջ կորսուած :

— Բայց լապտե՞րդ :

— Մարեցաւ :

— Հապա դե՞տը :

— Անհետ եղած է :

— Աքսէ՛լ, խեղճ Աքսէ՛լս, սիրտ ա՛ռ :

— Քիչ մը սպասեցէք... պատասխանելու կարողութիւն չունիմ, բայց դուք խօսեցէք :

— Սիրտ ա՛ռ, կրկնեց հօրեղբայրս : մի՛ խօսիր, մտիկ ըրէ : Գետնուղիին մէջ վայր ու վեր ելլելով քեզ փնտռեցինք, բայց անկարելի եղաւ գտնելը : հրացանի հարուածներ պարպեցի : եթէ հիմա իրար կը լսենք՝ չենք կրնար իրարու ձեռք բռնել, բայց իրար իմանալնիս ալ բան մըն է : Աքսէ՛լ, յոյսդ մի կտրեր :

(Շարունակելի)

Թարգմ.

ԶԱՐԵՆ Ե. ՊԵՐՊԵՐԵԱՆ



2872 P. 07-12-1875
2911 11 6

Department of the Interior

Washington, D. C.

General Land Office

For the purpose of the survey of the land of the United States, the following is the list of the names of the persons who have been appointed to the office of Surveyor General of the Territory of New Mexico, and the names of the persons who have been appointed to the office of Surveyor General of the Territory of Arizona.

Surveyor General of the Territory of New Mexico

Surveyor General of the Territory of Arizona



Surveyor General of the Territory of New Mexico



Surveyor General of the Territory of Arizona

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Ա. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԴՏԱՄ ԼՐԱԴՐԻ ԴԻՄԱՅ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպազրէ ամեն
սեսակ գիրքեր, ման-

ագրեր, հանդեսներ, քաղաքակրթական, հասարակական հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այ-
ցափառներ, եւ սպազրութեան վերաբերեալ ամեն սեսակ պիտոյներ: — Տպարանին սեփական
2000է աւելի պատկերները յանձնարուած քաղաքական, տնտեսական, գիտական, արտա-
2000է աւելի պատկերները յանձնարուած քաղաքական, տնտեսական, գիտական, արտա-

Անմրցելի մատուցելու եւ նշանակաւորութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն սեսակ յանձնարարութիւններ:




ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ ղրկել Խմբագրութեանս, հակառակ պարա-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե. Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
աւանդ թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի ածանութեամբ
գոհացում տալ նոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե. ԻՍԱ-
ԳՐՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ.

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
դամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե. Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի դտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն